

ԱՅԳԵՆՈՎԻՏ — ՍԱՀՄԱՆԻՆ ԿԱՆԳՆԱԾ ԻՄ ԶԻՆԿՈՐ ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Մի րեկի՛ ընթերցող, այս պատերազմն ապացուցեց, որ գտնվելով մոլորակի տարբեր ծայրերում, մենք սփյուռքահայերս, ապրում ենք Հայրենիքով, նրա ցավերով, վերքերով, հաղթանակներով ու պարտություններով: «Քեզ հետ ենք, երկիր» խորագիրն այսուհետ կպատմի մեր Միքո ու Կարոտի, պարտված ու հաղթած երկրի մասին: Այս անգամ ներկայացնում ենք մեր թերթի հատուկ թղթակից ԶՈՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ մտորումները իր հայրենի սահմանամերձ Այգեհովիտ գյուղից:

Իմ սուրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես, Դու սրտիս մեջ ես, ոչ լեզվիս վրա, Իմ սրտի միջից, թե սիրտս ճեղքես Դրոշիկ բոցը պիտի հուրհրա: Չեմ ուզում գոռալ իմ սիրո վասին, Սակայն, իմացիր, հայրենիք իմ մեծ, Քեզ հարյուր տեղով խոցեց թշնամին, Բայց հազար տեղով իմ սիրտը խոցվեց: Ես ամբողջովին բռնն եմ, հայրենիք, Եվ մոռի նման, ճամփեքիդ վրա Քո փառքի համար թե մի օր վառվեմ, Մոխրաբիծ անգամ ինձնից չի մնա:

Հովհ. Շիրազ

Այգեհովիտն է... սահմանին անխոնջ կանգնած և խրոխտ հերոսներ ծնած իմ բնօրրանը, տունս հերոսական ու հերոսածին... ինքս անընդհատ երանի եմ տալիս իմ աչքերին... ու հստակ պատկերացում եմ, որ նրա սուրբ սահմաններին ոտնձգել փորձողների աչքի բիբերը պատրաստ են անձամբ հանել, հարստ գլուխները քարաթակ անել, ոտները ջարդել ու իրենց է ցխել պատերին: Ցավոք...

Ամանոթյա մեր հրավառությունը փոխարինվեց մոմավառությամբ, հյուրընկալ տները փոխարինվեցին անմահացածների շիրիմներին այցելությամբ, տոնական խրմինների բույրը փոխարինվեց խնկի բույրով... ծիծաղը լացով, երգը աղոթքով... օղապարիկները հերոս սահմանակների երբեմնի երազանքներն են երկնքում սավանող... պարոք մնացինք ձեզ տղերք, մի ամբողջ կյանք պարտական մնացինք մեր կյանքը ձեր կյանքի գնով պարելու համար...



Այգեհովիտը

քի գզգզում... մեր համեստ, մեր աչքի առաջ մանուկից պատանի, հետո նաև ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍ դարձած Սամվելիկ ջա ն... բառերս չեն հերիքում... լռեմ երևի... Թերեզա, Թինա օսաներ... Սամվելիկի տեղը ապրելի պետք... ինչքան էլ ես պահին պնասելի ցավոտ է բոլորիս համար... ապրե լ...

Ճանաչողները Հարություն մասին շոյալ բառեր չեն խնայում, բարի, կամեցող, ռազմական բժշկի վեհ կոչմանն արժանի, ուղղակի լավ տղա... լավ տղա, որը ծնվել էր ուրիշի ցավը ամոքելու, հիվանդին բժշկելու և կյանքի կոչելու համար... լավ տղա, ով պետք է ապրեր, որ ապրեցներ... լավ տղա, ունով պետք է հպարտանայինք ազգովի, ով



Մրվեղի վանքն է, գտնվում է Այգեհովիտ գյուղից 3 կմ հարավարևմուտք՝ Խաչի Տակ կոչվող վայրում, անտառապատ բացառի բարձրադիր սարայանջին: Քեզանով ենք գտնվում ու ինքնամաքրվում, մեր խնարհված, բայց չենկան վեհություն... ամուր պանիր գավակների, թող ոչ մի շուն չխաթարի քո դարավոր անտորը, մեր չնիրհող խՐԴԸ:

պարտավորեցնող, ոտքի հանող պարոք... հավերժ փառք քեզ, ազգի ընտրանի...

Ամանակների տոնը շնորհավորելու գնացի... ու հայր հայի արյուն խմելը, հայր հայի վրա կեղտաջուր լցնելը, հայր հայի մեռնելն ուզելն ու արար աշխարհին մեղադրելը դարձավ նրանց սուրբ գերեզմանի խնկի ծուխը... Էստեղ ամեն ինչ վեհ է... Էստեղ աշխարհիկ մանրուքները դառնում են ոչինչ...

Մեր անգին հողի գրկում Սամվելիկի նման գազաթներ են պարուրված... չգիտեմ ինչ եմ գզում, անբացատրելի ցավի, հարգանքի, հպարտության և անմարելի պարտ-



Սամվել Մատինյանը



Հարություն Չոբանյանը

պետք է հայտնի լիներ և բժշկեր դեռ երկար ու երկար... իսկ հիմա... հիմա անմահացած բժիշկ Հարություն է, ում սխրանքը անմեղ է, ով հավերժում մնաց որպես հերոս... չգիտեմ ինչ եմ գզում... հպարտանում եմ մեր հերոսներով, պարտավորված ապրելու ենք ողջ կյանքում, իսկ էս սրբավայրերը բոլորիս համար մշտական ուխտատեղի են լինելու...

Այգեհովիտի հաջորդ ընտրյալը Կարապետ Յայլայանն է... երիցս փառք Հայրենիքի համար անմահացածներին... Երիցս փառք...

Տոնը շնորհավո՛ր, ՀԱՅ ԶԻՆՎՈՐ... ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ապագա շինարար... Տոնը շնորհավոր ՀԱՅՐԵՆԻՔԻ բզկտված սահմանները անձով, արյունով պաշտպանող իմ ՀՄԿԱ յորդի, երբայր, բարեկամ... Տոնը շնորհավոր, անմահացած ԳԱԳԱԹ, այսուհետ մեր հերոսության, անձնվիրության և խրոխտության միանձնյա չափանիշ...




Կարապետ Յայլայանը

ԵՌԱԲՈՒՐՈՒՄ

Դուք զիշերով անամպ Երկիրը թռած աստղե՛ր, Ննջե՛ք թաղադրությամբ, Դուք հաղթել էք, տղե՛ք րբ: Դուք հաղթել եք մահին, Դեհ և՛ եռագլուխ, Դուք ոգեղեն ու հիր, Ձեր շուրջ մահվան սև ծուխ: Ձեզ թողել ենք մենակ, Ցավ ենք ապրել հեռվից, Դուք գոհել եք ձեր տաք Երազանքներ ու իղձ... Դուք ընկել եք, սակայն Դուք չե՛ք պարտվել, տղե՛ք րբ, Դարտվողները, ավա դ, Ապրողներս ենք եղել:

Միքայել Մերունց Անանյան

Եռաբլուրից տուն եմ գալիս աշխարհից խռոված, վշտացած ու թնաթափ... իսկ կյանքն այստեղ շարունակվում է սահմանամերձ գյուղիս Այգեհովիտիս նորածնի ճիշով, դպրոց շտապող թխաչ մանուկների երթով, օջախներից երկիրը ձգվող կապույտ ծխով... գաղթ ու պատերազմ, կորուստ ու կոտորած տեսած մեր մամիկների հաց թխող ձեռքերով, վիշտ ու հույս շաղախած լույս — հայացքով...



Հեսալի

...Հեսալի ենք ուտում ժողովուրդ... Տավուշի անմահական անուշեղենը ավելի է համեղանում իմ սիրելի Ռահիդա տատիկի աշխատած, սիրուն, բուրումնավետ ձեռքերից... հեսալին շերտավոր խմոր է, լցունված հետով յուղի և շաքարի շաղախով... հեսալի հետով լի, Իջևանում թերթեվուտ, Շամշադինում փսալի, Արցախում նազով... դե համ ու հոտի մասին լռում եմ... բոլոր մտահոգ ու կարոտած հարազատներինս ասեմ, որ Լուսն Մելիքբեկյանի օգնությամբ Ռահիդա տատը ընտիր ու փափուկ հեսալիներ հանեց... Ինչ ենք մենք առանց մեր ազգային արժեքների...

Վերադառնում եմ Ռոստով... Զվարթնոցում թոփչի սպասողների աչքերում թախիծ կա, բաժանման ու կորստի ցավ...

Ինքնաթիռը վեր է բարձրանում՝ ցածում թողնելով Մասիսներս, Երևանս... Այգեհովիտս, Եռաբլուրս... իմ անմահացած հերոսներին... ներքե՛ք մեզ, տղերք, որ ձեր կյանքի գնով պիտի հաստատվեր մեր անփառունակ, անհամուռոտ ապրելու իրավունքը...


...Քիչ անց ինձ բռնում եմ այն մտքի վրա, որ արդեն կարոտում եմ քեզ իմ անպարագծելի Մեր, Հույս ու Հավատ, իմ Հայաստա և աշխարհ...

ԹՈՒՄԱՆՅԱՆ — 152

ՎԻՐՏՈՒԱԼ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍԵՂԾԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Վաղուց թեև իմ հայացքը անհայտին է ու հեռվում Ու իմ սիրտը իմ մրտքի հետ անհուններն է թափառում, Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝ Մղկրտում է սիրտըս անվերջ քո թառանչից աղեկեզ...

Փետրվարի 21-ին՝ Մայրենիի միջազգային օրը, Հովհաննես Թումանյանի թանգարանի «Թանգարանային դաս» առցանց ծրագրի շրջանակում Դոնի Ռոստովի կիրակնօրյա դպրոցի աշակերտները վիրտուալ այցելեցին Թումանյանի թանգարան: Միջոցառմանը ներկա էին նաև բանաստեղծուհի Մուսաննա Հովհաննիսյանը, օպերային երգչուհի Լուսինե Աղաջանյանը, լրագրող Մուսա Կարապետյանը, ուսուցչուհի Շովինար Մարգարյանը:



Թանգարանի էքսկուրսավար Վարդանուշ Նալբանդյանը շատ պատկերավոր, տպավորիչ, դիրքակտիկ լրացուցիչ նյութերով ներկայացրեց Հովհաննես Թումանյանի կյանքն ու ստեղծագործական ուղին, հասարակական ակտիվ գործունեությունը, ներկաների համար ընթերցեց Թումանյանի «Շունն ու կատուն», կարդաց հանելուկներ: Այո, այդ օրը անցյալը շնչեց, դարձավ ներկա և օգնեց մեզ տեսնել ապագան: Թումանյանը կտրեց մեր հայացքը հողից, բարձրացրեց վեր դեպի Տիեզերք, դեպի հավերժություն:



— Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին. Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին. Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր, Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:



Ցերեկույթը շարունակվեց թեյի սեղանի շուրջ: Շովինար Մարգարյանը երեխաներին և հյուրերին հետաքրքիր փաստեր ներկայացրեց Մայրենիի միջազգային օրվա կապակցությամբ: Նա նշեց, որ տոնը մեզ համար հայապահպանության, ազգային ինքնության խորհուրդ ունի, և սա լավ առիթ է մեկ անգամ ևս գնահատելու և վերաբժնաբերելու մեր լեզվի գանձերը, մեր ոսկեղենիկ մայրենին: Մայրենի լեզուն լույս է, որ վառ է պահում սերունդների ճանապարհը: Լինե՛ք նրա յուսյալ կրող ջահակիրներ լուսավորելով մեր միջավայրը, փառաբանե՛ք և մեծարե՛ք մեր լեզուն, սիրե՛ք և փայփայե՛ք նրա:

Արմինե ՀՈՎՍԵՓՅԱՆ